ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Ուրիխանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-933-12.01.2016-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հեռուստաընկերությունները Հայաստանի Հանրապետության տարածքում եթերով հեռարձակվող կինոֆիլմերը պարտավոր են ցուցադրել պետական լեզվով՝ հայերենով: Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ օրենքի նախագծի ընդուն-

ման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական լեզվի՝ հայերենի, պահպանմամբ և զարգացմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև *առանց պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը*: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համաչափ լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը: Տվյալ սահմանադրական նորմերի վերլուծությունից բխում է, որ պետությունը, պարտավորվելով ապահովել անձի նշված իրավունքի իրացումը, չպետք է որևէ կերպ, այդ թվում՝ նաև որևէ ցանկալի նպատակի հասնելու համար տեղեկատվության աղբյուրի գործունեության հնարավոր դադարման նախատեսման ոչ համարժեք միջոց նախատեսելով սահմանափակի անձի՝ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Նման դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքից: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր «Առուտորիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի» գործում արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածը (Կարծիք արտահայտելու ազատություն) վերաբերում

է ոչ միայն տեղեկությունների բովանդակությանը, այլև դրանց փոխանցման և կամ ստացման միջոցներին, քանի որ այդ միջոցների վրա դրված ցանկացած սահմանափակում անպայման հանգեցնում է միջամտության՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքին (*Autronic AG v Swizerland, A. 178, 1990, 12 EHRR 485*):

Օրենքի նախագծի ընդունման պարագայում Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստաընկերությունների վրա կդրվի լրացուցիչ ֆինանսական բեռ, քանի որ թարգմանությունը կարող է իրականացվել կամ սեփական միջոցների կամ տվյալ կինոֆիլմն արդեն իսկ թարգմանած հեռուստաալիքից գնելու միջոցով: Տվյալ հանգամանքն արդյունքում կարող է հանգեցնել փոքր բյուջեով հեռուստաընկերությունների գործունեության դադարման: Իսկ նմանատիպ պայմաններում կխախտվի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նշված հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքը, քանի որ հեռուստաընկերությունների գործունեության դադարման պայմաններում սահմանափակվում է տվյալ հեռուստաընկերության՝ տեղեկատվություն և գաղափարներ տարածելու իրավունքը, որն էլ հանգեցնում է անձի՝ ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության շրջանակի սահմանափակմանը: Այսինքն՝ հեռուստաընկերությունների համար օրենքով նման սահմանափակման միջոցի ընտրությունը համարժեք համարվել չի կարող սահմանափակվող իրավունքի և ազատության նշանակությանը: Այլ կերպ ասած՝ օրենքի նախագիծը մի կողմից նպատակ ունենալով ապահովել հայերենի պահպանումն ու զարգացումը, մյուս կողմից վտանգում է անձի՝ ցանկացած միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Այդ առումով օրենքի նախագծի հիմնավորման մեջ պետք է վերլուծվեր գործող հեռուստաընկերությունների վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնելու պայմաններում դրանց գործունեության արդյունավետությունը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է բացահայտել ազդեցության գնահատականը, մինչդեռ նշված տեղեկատ-

վությունը բացակայում է: Բացի դրանից, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածով սահմանվում է՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն գրական հայերենն է՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը.

2) 8-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) չի կարող ամսական ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս լինել:

Նշված դրույթներից հետևում է, որ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումն օրենքով տրված է: Այն է՝ եթերով հեռարձակվող կինոֆիլմերը, հանդիսանալով հեռարձակվող հեռուստահաղորդումներ, օրենքի ուժով պետք է հեռարձակվեն գրական հայերենով՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստաընկերությունների եթերում արտասահմանյան ֆիլմերը քիչ տոկոս են կազմում, իսկ հեռարձակվող արտասահմանյան ֆիլմերը շատ դեպքերում ցուցադրվում են հայերեն թարգմանությամբ: Ավելին՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը հեռարձակումն իրականացնում է բացառապես հայերենով՝ չնայած այն հանգամանքին, որ օրենքով պարտավոր է օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին (օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մաս, 1-ին կետ):

Օրենքի նախագծի ընդունման դեպքում կխախտվեն ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Եզնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հեռուստաընկերությունների համար սահմանվում է հեռարձակվող կինոֆիլմերը հայերեն լեզվով ցուցադրելու պարտադիր պահանջ, ինչպես նաև պատասխանատվություն՝ վերոնշյալ պահանջը խախտելու համար: Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***բացասական ազդեցություն***՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվող կարգավորումը տնտեսվարողների համար կառաջացնի լրացուցիչ ֆինասական ծախսեր՝ կապված ֆիլմերի հայերեն թարգմանության հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հեռուստաընկերությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող կինոֆիլմերը հայերեն լեզվով ցուցադրելու պարտադիր պահանջ, ինչպես նաև պատասխանատվություն՝ վերոնշյալ պահանջը խախտելու համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է սահմանել, որ ՀՀ տարածքում գործող բոլոր հեռուստաընկերությունների կողմից հեռարձակվող կինոֆիլմերը պետք է ցուցադրվեն բացառապես պետական հայերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն:

Նախագծով առաջարկվում է նաև սահմանել, որ ՀՀ տարածքում գործող բոլոր հեռուստաընկերությունների կողմից հեռարձակվող կինոֆիլմերը ոչ հայերեն լեզվով ցուցադրելու դեպքում նշանակվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ դրական ազդեցություն:

Միաժամանակ, Նախագծի ընդունումը ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-933-12.01.2016-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1 կետով.

«1.1 Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հեռուստաընկերությունները Հայաստանի Հանրապետության տարածքում եթերով հեռարձակվող կինոֆիլմերը պարտավոր են ցուցադրել պետական հայերեն լեզվով:»

Հոդված 2. Օրենքի 60-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 կետով.

«4.1 Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հեռուստաընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող կինոֆիլմերը ոչ հայերեն լեզվով ցուցադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իններորդ օրը:

Հիմնավորում

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Սույն օրենքի անհրաժեշտությունը թելադրված է պարզ տրամաբանությամբ. այն է՝ մայրենի, պետական լեզվի՝ հայերենի, պահպանություն եւ զարգացում: Ճիշտ այնպես, ինչպես ցանկացած այլ երկրում հեռուստատեսությամբ կինոֆիլմերը ցուցադրվում են տվյալ երկրի պետական լեզվով, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետք է ցուցադրվեն հայերենով: Օտար լեզվով ֆիլմերի դիտումն ինքնին առաջացնում է օտարալեզու մտածողություն եւ տարիների ընթացքում առաջացնում է մարդկանց մոտ նախապատվություն օտար լեզվի նկատմամբ: Հայապահպանության ու առաջին հերթին ազգային լեզվի պահպանման եւ տարածման հարցում տվյալ նախագիծը կունենա անփոխարինելի եւ նույնիսկ պատմական նշանակություն: Հատուկ ընդգծում եմ, որ իմ նախագիծը ուղղված է բացառապես հայերենի պահպանմանն ու զարգացմանը եւ նպատակ ունի արգելելու հայկական հեռուստաալիքներով կինոֆիլմերի ցուցադրությունը թե՛ կորեյերեն, թե՛ պորտուգալերեն, թե՛ արաբերեն, թե՛ թուրքերեն եւ թե՛ ցանկացած այլ օտար լեզվով: